

03.7
- 37 -

829

203.7
F-37

ՄԱՏԴԵԼԻ ԲԱՐՈՁՆԵՐ

Հայ ժողովրդականաց կարդալու համար

• Ոչ միայն հացով կառըի մա ըգ-
այլ Աստուծոյ բոլոր խօսքով։
(Ղոհկ. դ. 4)։

1908
36143

Ա.

ՏԵՏՐԱԿ

Մ. Ե. Թարխութարեան

1908

Տպագրուած Նոր—Արմավիրցի Մեծ. Մանուկ—աղա
Կարապետեան Տերիմ—Օղեանցի ծախմով

Հրամանաւութեան

Տ. Տ. ՄԿՐՏՉԻԿ Ա-

Քեչափսու եկ Սրբաջնակութն ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՑՈՑ



ՎԵՐԱՌՈՒՊԱՑ

Տպարան Մայր Արքունյ Մրգոյ Էջմիածնի

1900

2010

1153

Дозволено Цензурою, 31 Марта 1900 г. г. Тифлисъ.

Digitized by srujanika@gmail.com

«Ոչ միայն նացով կապրի մարդ, այլ Աստուծոյ
քոլոր խօսենվ»:

Նորին Սուլբ Օծութիւն Վեհափառ Հայրապետութիւն և Պատրիարք Կաթուղիկոսն ամենայն Հայոց Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա. Նոր—Արմավիր-ցի բարեպաշտ Մանուկ—աղա Կարապետեան Տէրիմ-Օղեանի ազգօգուտ բաղձանքը Եցուցանելու հաճութեամբ, բանաւոր հրամայեց ինձ նուաստիս գրել Մատչելի Քարոզներ, որք հետզհետէ տետրակներով տպագրուելու են Մայր—Աթոռոյա տպարանումնեա:

Որքան հնարխուր է, կաշխատեմ պարզ և
հասկանալի անել Աստուծոյ խօսքերը հայ հասա-
րակութեան: Մարմնաւոր կերակուրներն և ըմ-
բելիներն սնունդ են տալիս մեր մարմնոյն միայն,
իսկ Աստուծոյ խօսքերն ոչ միայն սնունդ են տա-
լիս մեր հոգիներին, այլ և լաել են տալիս մեզ
Աստուծոյ պատգամները, զօրացնում են մեր մէջ
ճշմարիտ հաւատը, յոյսը և սէրը, իբրև լուսատու
ճրագներ լուսաւորում են մեր երկրաւոր կեանքը,
կըթում են մեր շարին հակամէտ միտքը, ազնուաց-
նում են մեր սրտերը, փայլեցնում են մեր բանա-
կանութիւնը, սանձահարում են մեր անվայել ըգ-

գացմունքները և իշխելով մեր բոլոր զգայարանաց վերայ՝ առաջնորդում են մեզ դէպի բարին, դէպի օգտակարն և դէպի Աստուծոյ հաճելի ճանապարհն՝ մեր մարմնաւոր կեանքումս;

Աղեքսանօք աղաչում եմ որ մարդացեալ Յիսուս Քրիստոս Փրկիչն՝ իւր Ամենասուրբ Հոգու չնորհը սփոէ և ծաւալէ մեր ամենուս սրտերի, մտքերի և հոգիների վերայ, որ կարողանանք զօրացեալ հաւատով լսել Աստուծոյ խօսքերը, զործքով կատարել նորա կենսատու պատուէրները և սուրբ Հրեշտակաց նման աստուածահաճոյ վարքով և բարքով լինիլ Աստուծոյ որդիներ:

Մ. Ե. Բարխուտարեանց

Ա բարե ներառյալ Հ զանգութ հացած
առաջ բա՛ զանցու շահառան թան զբանական
այ և մշտականութ զանցնամ մասնիւթոց
մասն մասնակն ուն ունակ մա բանու համայն
ուն մա ունակ ուն ունակ շահառան շահառան բայ
բայ ունակ մա յայ և բա մազգանքու զան ուն
շն զան մա նամակայ պահանարան բանուն
ունակ այդ այն առաջ զանան ունական
զանան զանարկ զան մա նամական զանարկ
զանարկ զան մա նամական զան մա նամակ
ունակ զան մա նամական զան մա նամակ
բանակ զան մա նամական զան մա նամակ



Ա. ԽԱՐՈՉ

«Համբերութեամբ պէտք է զնանք դէպի այն պատերազմն, որ կայ մեր առաջ. պէտք է նայենք հաւատոյ Զօրագլուխ եւ կատարող Յիսուսին» (Եթ. Ժ. 1 – 2):

Մարդ կազմուած է մարմնից և հոգուց: Ինչպէս կայ մարմնաւոր զօրք, զօրապետ, հազարապետ և զինու որութիւն, նոյնպէս էլ կայ հոգեւոր զօրք, զօրագլուխ, հազարապետ և զինու որութիւն: Դրուք տեսած կը լինիք թէ աշխարհիս մարմնաւոր ժագաւորներն ինչպէս են կրթում սովորցնում և պատերազմի վարժեցնում իւրեանց զօրքերը և հազարապետները: Այնպէս էլ երկնքի թագաւոր Յիսուս Քրիստոսն կրթում: սովորցնում և հոգեւոր պատերազմի վարժեցնումէ իւր հոգեւոր զօրքը և հազարապետները: Ամեն ուղղափառ քրիստոնեայ—թէ մարդիկ և կանայք, թէ տղայ և աղջիկ—երբ մկրտուումէն Ամենասուրբ Երբորդութեան անուտմբ «Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ» և դըրոշմուում Սրբալոյս Միւռոնաւ, զինուոր են զըրուում Քրիստոսին և մտնում Նորա Սուրբ Խա-

շի դրօշտիկ տակ ՚ինչպէս բարի զինուոր Քրիստո-
սի» (Բ. Տիմոթ. Բ. 3):

Դուք անսած կը լինիք որ մարմնաւոր թա-
գաւորներն մարմնաւոր զօրապետներն և մարմնա-
ւոր զինուորներն ունին մարմնաւոր զէնքեր, ինչ-
պէս են սուր, թուր, հրացան, թնդանօդ, գնդակ
և վառօդ և սուխն (խիշտ). թշնամի թագաւորնե-
րի և զօրքերի հետ կոռւելու և իւրեանց հայրե-
նիքը և երկիրը և տէրութեան պատիւը ազատ և
բարձր պահելու համար: Նմանապէս Յիսուս Քը-
րիստոս երկնքի և երկիրս աստուածային թագա-
ւորն, իւր հազարապետ Առաքեալներն, և իւր ա-
մեն հոգեւոր զինուորներն ունին աստուածային
զէնքեր, որք են միշտ արթուն կինալ մորով, ան-
պակաս աղօթել կատարեալ հաւատք ունենալ
փրկութեան վերայ, տոկուն համբերութիւն,
հաստատ յոյս և անխախտ սէր, և շարունակ կար-
դալ սուրբ զիրքը, որ Սուրբ Հոգուն սուրն է: Ո-
րովհետեւ մեր այս հոգեւոր պատերազմն մի օրուան
մի ամսուան և մի տարուան պատերազմ չէ, այլ
երկարատեւ կոիւ է, որ սկսուում է մեր խելքն հա-
սած օրից մինչեւ մեր մեռնելու օրն շարունակ տե-
սում: Այս պատճառաւ մենք պէտք է միշտ զի-
նուած լինիք այդ աստուածային զէնքերով և պատ-
րաստ: ասում է Պաղոս Սրբազն առաքեալն: Մեր
պատերազմն մարդիկ սպանելու և արիւն թափելու
պատերազմ չէ, մենք գործ չունինք մարդիկ սպա-

նելու և անմեղ արիւն թափելու հետ, այլ մեր
պատերազմն մեղքերի և մոլութեանց իշխանու-
թիւնների հետ է, չար կըքերի և հոգեկորուստ
ցանկութեանց պետութիւնների հետ է: Աստու-
ծոյ թշնամի սատանաների հետ է, որ Աստու-
ծոյ ահեղ հրամանաւ երկնքից վար թափուեցան
և աշխարհիս սկզբից մինչեւ աշխարհիս վերջն
պատերազմած են, պատերազմում են և պա-
տերազմելու են: Ադամածին սերնդոց հետ խա-
ւարային բռնակալութեամբ յաղթելու մեզ և տի-
րապետելու և իշխելու մեր վերայ և վերջապէս
սպանելու մեր հոգիները և մարմինները: Սորա
համար է, որ հոգեւոր պատերազմում փորձառու
և միշտ յաղթող մեր հազարապետ Պօղոս Սրբա-
զան առաքեալն պատուիրում է մեզ հոգեւոր զին-
ուորներիս, ասիկով: Համբերութեամբ պէտք է զը-
նանք գէպի այն պատերազմն, որ կայ մեր առաջ-
պէտք է որ միշտ աչքի առաջ ունենանք մեր Զօ-
րագլուխ Յիսուս Քրիստոսի երկրաւոր կեանքը և
ըստ այնմ առաջ տանենք մեր հոգեւոր կեանքը և
բարոյական պատերազմը, որպէս զի հոգեւով ու
մարմնով գերի շընկնենք մեր թշնամեաց ձեռքն, և
մեռնենք յաւիտենական մահով, վասն զի մեր հո-
գիների թշնամի սատանան մռնչում է առիւծի պէս
թէ մեզնից որ մինը պիտի կլանէ:

Մեր Զօրագլուխ Յիսուս փրկիչն մարդ եղաւ
մեզ նման և իւր ծնած օրից մինչեւ յարութեան

օրն շարունակ հոգեսոր պատերազմաւ կռուեց աշխարհի, մնղքերի, սատանայի, մոլութեանց և մարդոց շարութեանց դէմ: Աշխարհս՝ Յիսուսին ծնանելու համար՝ մի հանգիստ տեղ շտուաւ, նա ծնաւ անասնոց մաղարայում: բայց իմաստուն մոգեր, արթուն հովիւներ և սուրբ Հրեշտակներ վկայեցին և ընդունեցին որ ծնուած մանուկն, մարդացեալ երախան աստուածային թագաւոր է, աշխարհիս Փրկիչն է: Դեռ 40 օրական Յիսուս մանուկն Եգիպտոս հալածուեցաւ Հերովդէս թագաւորի սպառութիւնից ազատուելու համար բայց Սիմեոն ծերունին և Աննա մարգարէտուհին դաւանեցին նոյն Մանուկն Օծեալ, Տէր, Հեթանոսաց լրյս և ժողովրդեան փառք և աշխարհի Փրկիչ: Յորդանան գետում մկրտուեց իւր ծառայ Յովհաննէս Մկրտչից՝ մեղաւոր մկրտուող մարդոց շարքում: բայց Հայր Աստուած վերևից վկայեց՝ որ մկրտուող Յիսուսն իւր սիրելի որդին է և Ս. Հոգին իջնելով յայտնեց որ մկրտուող Յիսուսն իւր փառակիցն է և Ս. Երրորդութեան Բ. անձն: Սատանան՝ քառասնօրայ պահոց վերջին օրերում՝ երեք անգամ փորձեց ամայի անապատումն անօթեցած Յիսուսին յաղթելու, բայց ինքն չարաչար յաղթուեցաւ Յիսուս Զօրագլուխ Ս. Հոգւյն Սրովի Աստուածոյ խօսքով: «Մարդ միայն հացով չապրիր, այլ Աստուածոյ խօսքով»: «Քո Տէր Աստուածը չփորձեա» գրուած է որ Քո Տէր Աստուածուն միայն եր-

կրպագութիւն անես և Նա միայն պաշտես», և այն յաղթութիւնից յետոյ հրեշտակներն մօտեցան և պաշտում էին Յիսուսին: Չնայելով որ միշտ տեսնում էին Յիսուսի աստուածային հրաշքները՝ հիւանդների բժշկուիլը, կաղերի վազելը, կոյրերի տեսնելը, գօսացեալների և անգամալոյձների առողջանալը, մեռեալների յարութիւն առնելը, այսու ամենայնիւ Երուսաղէմի մէջ միացան ամեն քահանայտետներն, քահանաներն, դատաւորներն, ժողովուրդն և մարմնաւոր զինուորներն բռնեցին Յիսուսը չարչարեցին, տանջնեցին, անարգեցին, խաչեցին, մեռցըն, ծաղրեցին և թաղեցին, գերեզմանն էլ կնքեցին: Բայց այս ամենը տարաւ Յիսուս համբերութեամբ և միայնակ պատերազմելով իւր դէմ յարուցած աշխարհի բոլոր չարութեանց, աւերեց գժոխը, ազատեց արդարոց հոգիները, յարութիւն առաւ փառաւորապէս և կորագլուխ թողեց իւր դէմ զինուած ամբողջ յաղթուած թըշնամիները: Ահա սոդա համար է որ ասում է մեր Զօրագլուխ Յիսուս Քրիստոս: «Ով որ կը համբերէ վերջին ծայր, նա կապրի» և թէ «քաջալերուեցէք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհի»: Սորա համար է նաև որ մեր հոգեսոր հազարապէտ Պօղոս առաքեալն պատուիրում է մեզ ասելով: «Համբերութեամբ գնանք դէպի այն պատերազմն: որ կայ մեր առաջ, միշտ մեր աչքի առաջ պէտք է ունենանք մեր հաւատի Զօրագլուխ Յիսուսի Երկրա-

տոր կեանքը: Համբերութեան լաւ օրինակ է մեզ
համար և Յովին:

Այս տեղ հարկաւոր է բացադրել մի ինդիր,
համեմատելով հոգեւոր պատերազմի յաղթութեանց հետ
մարմնաւոր պատերազմի յաղթութեանց հետ
փառքը՝ փառաց հետ և մեծութիւնը՝ մեծութեանց
հետ: Մենք զիտենք որ մարմնաւոր զօրագուխ-
ներն իւրեանց զօրքի բազմութեամբ, զէնքի և
թնդանօթների ուժով են գրաւում երկիրներ և
յաղթում իւրեանց թշնամեաց: Բայց պարզապէս
տեսանք որ հաւատոյ Զօրագլուխ Յիսուս Քրիստոս,
ինքն միայնակ պատերազմելով աշխարհի հետ, բո-
լոր մոլութեանց, մեղաց և թշնամի սատանայի հետ
յաղթեց և գրաւեց նորան ամուր ճանկած ձեռ-
ների միջից մարդոց հոգիները և աւերեց դժոխքը:
Ահա այսպիսի համբերութեամբ միայնակ պատե-
րազմելով յաղթեցին մինչեւ անգամ սարսափելի
մահուան Առաքեալք, մարտիրոսք, նահատակը և
կուսանք, աչքի առաջ ունենալով աստուածային
Զօրագլխի երկրաւոր կեանքը և զօրանալով ու քա-
ջալերուելով Յիսուս Քրիստոսի անունով, որ ասաց:
«Եւ ահաւասիկ ես ձեզ հետ եմ մինչեւ աշխարհի
վերջանալն»: Պողոս սրբազն առաքեալն, ինքը մեզ
օրինակ տալով, խրախուսում է մեզ ասելով, «Հաւ
պատերազմաւ կռուեցի, կեանքիս ընթացքը կատա-
րեցի, հաւատքս պահեցի: Այսուհետեւ մնում է
ինձ համար արդարութեան պսակն, որը հատու-

ցանելու է ինձ արդար դատաւոր Տէրն այն օրեւ-
րում, ոչ միայն ինձ, այլ և ամենուն, որ սիրեցին
Նորա յայտնութիւնը» (Բ. Տիմոթ. Դ. 7—8):

Այժմ տեսնենք թէ ինչ զենքերով են կռուում
մեզ հետ մեր հոգու թշնամի մոլութիւններն, աշ-
խարհս, անվայել կիրքերն և չարերն, որք մեզ յաղ-
թելու համար միաբանում են ինչպէս գաշնակից
ոխերիմ և անհաշտ թշնամիներ: Ահա այս հոգե-
կորուսա զէնքերով զինուած են—հպարտութեամբ,
չար նախանձով մահարեր բարկութեամբ, ծուլու-
թեամբ, ազահութեամբ, որկանիլութեամբ (չափա-
զանց ուտել և խմելու ետևից ընկնիլ): և կատաղի
անվայել ցանկութիւններով և ուրիշ շատ տեսակ
մեղքերով, անդատար կերպով պատերազմում են
մեզ հետ մեր ամբողջ կեանքում: Բայց մենք պէտք է
որ միշտ արթուն լինինք հոգւով և մաքով, և լաւ
զինուած Աստուծոյ խօսքով. հպարտութեան դէմ
կոռուելու ենք իսոնարհութեամբ, «ինձնից սովորե-
ցէք զի ես հեզ եմ և սրտով իսոնարհ» ասում է
Յիսուս: Որովհետեւ հպարտութեամբ կործանուե-
ցաւ սատանան, և նոյն զէնքով աշխատում է կոր-
ծանել և մեզ, ինչպէս մեր նախանձնողները:

Չար նախանձի դէմ պէտք է կռուինք բարի
նախանձով (այս ինչ մարդն միշտ եկեղեցի է գնո մ
և աղօթում.—ես էլ գնամ և աղօթեմ: այս է բա-
րի նախանձն և սորա նման ուրիշ բարի զործեր):
Չար նախանձի պատճառով սպանուեցաւ Աբէլ իւր

եղբայր Կայենից, Յովսէփ—զեղեցիկ ծախուեցաւ իւր եղբայրներից և մեր նախաձնողներն արտաքսուեցան Դրախտից: Այս պատճառաւ Ս. Գիրքն զգուշացնում է մեզ պատուիրելով. «Նախանձաւոր եղեք այն շնորհաց, որ լաւ են, բարի են:

Սպանիչ բարկութեան դէմ պէտք է պատերազմենք հեզութեամբ, իւր անհուն հեզութեան համար Քրիստոս կոչուեցաւ Գառն Աստուծոյ: Քանի մարդիկ զոհ եղած են Զար նախանձի և Սպանիչ բարկութեան, քանի քանի երկիրներ Հիմնայատակ կործանուած են սպանիչ բարկութեամբ: Այս պատճառաւ է որ Ս. գիրքն զգուշացնում է բնաւ շբարկանալ և մինչեւ անդամ չատել: «Ամեն մարդ, ով որ ատում է իւր եղբայրը, մարդասպան է», զամն զի չար բարկութիւնն առաջանում է առտելութիւնից:

Ծուլութեան դէմ պատերազմելու ենք աշխատութեամբ և ժրաշանութեամբ: Սողոմոն իմաստունն մրջիւնի և մեզուի մօտ է ուղարկում՝ ծոյլերը, որ գոնէ աշխատել սովորեն այդ փոքրիկ և մշջերն մազաշափ բարակ միջատներից, իսկ մեր Ստեղծող Աստուածն պատուիրած է մեզ միշտ աշխատել և մեր ճակատի քրտինքով վաստակած կերտակրով կերակրուիլ. Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քոյ: Արքայութեան գոներն անգամ միշտ փակ են ծոյլերին համար, «Ուից և ծուլից փակեալ է գուռն Արքայութեան երկնից»:

Ագահութեան (թամահքեարութիւն) դէմ կը-ռուելու ենք չափասիրութիւն պահելով մեր կեանքի մէջ: Ագահութիւնից զրկուած քանի քանի եղբայրներ և քոյրեր կան թշուառացած, քանի քանի գանգատներ և բողոքներ կան մարմնաւոր դատարաններում դիզուած: Ագահութեան զոհ եղած քանի քանի հարազատ եղբայրներ և քոյրեր անհաջանի եղած են միմեանց, և որ մեծն է տարիներով զրկուած են սրբութիւն առնելուց՝ անհաշտ ատելութեան և օխակալութեան պատճառաւ, և լն, և լն: Սորա համար է որ պատուիրում է մեզ մեր Զօրապլուխ Յիսուս Տէրն, «Զգուշացէք ամեն աեսակ ագահութիւնից, . . .»:

Օրիրամոլութեան դէմ կռուելու ենք չափաւոր ուտելով և չափաւոր խմելով: Սովորական ժամանակից առաջ որքան մարդիկ մեռած են չափազանց ուտելուց: Արդեօք տեսնողներին տո՞ւր է գալիս հալրած, ցեխի, ձիւնի փոշու մէջ ընկած թաւալող և բոլորովին խելացնոր եղածներն: Դեռ չենք ուզում ասել միւս աններելի արարմունքները: «Մ' արբենաք զինով, յորում է զեղխութիւն» զզվարս պարկեշտս ցուցանել . . .: և այլն

Անվայել ցանկութեանց դէմ կռուելու ենք ողջախորութեամբ և ժուժկալութեամբ: Անվայել ցանկութիւնն այնքան անպատճուռութիւն և նախատինք բերած է Մարդկութեան գլխին, մինչեւ ան-

գամ ամաչում է զրել երկաթ անզգայ, բայց ա-
մօթխած զրիշն: «Ամեն մարդ, որ պատերազմում
է, վերջին ծայր ժուժկալ լինելու է»: Ողջախոհու-
թեան և ժուժկալութեան ամենաընտիր պատկեր
են Յովսէփ — գեղեցիկ և Յովհաննէս — աւետարա-
նիչն:

Ահա այսպէս նմանութիւն կայ մարմնաւոր և
հոգեոր զինուորականութեան մէջ: Տարբերութիւնն
այն է որ մարմնաւոր պատերազմներում սպանուած
զինուորներն միայն մարմնով են մեռնում: իսկ հո-
գեոր պատերազմում ընկածներն՝ հոգւով և մարմ-
նով ի միասին: Ինչպէս մարմնաւոր պատերազմում
քաջութեամբ կռուողներ և վիրաւորողներն նշան-
ներ և պարգևներ են ստանում և զովասանք վա-
յելում: իսկ թոյլ և պատերազմից փախչողներն՝
նախատինք և արհամարհանք, այսպէս է և հոգե-
ւոր զինուորների համար:

Ծշմարիտ խօսելով հոգեոր պատերազմներում
հոգւով և մարմնով մեռածներն շատ և շատ աւե-
լի են՝ մարմնաւոր բոլոր պատերազմներում մարմ-
նով միայն մեռածներից:

Հնթերցող ազնիւ եղբայրներ, քոյրեր և զտ-
ւակներ, ուրեմն միշտ մեր հոգիների աշքերի ա-
ռաջ ունենանք Քրիստոնէութեան հեղինակ Զօ-
րագլուխ Յիսուս Քրիստոսը, միշտ աղօթենք և
զգուշ միանք, արթուն կենանք հոգւով, և մտքով
և սրտով, յաճախ կարգանք Ս. Գիրքը, որ մեր հո-

գուն ներշնչէ արիութիւն և համբերութեամբ կը-
ուուենք մեր հոգեոր թշնամիաց դէմ և միշտ յի-
շելով Յիսուս Քրիստոս ամենայաղթ և պաշտելի
անունը և զօրանանք, քաջալերուինք և յաղթող
հանդիսանանք մեր կեանքի երկարատեւ պատերազ-
մում, որպէս զի կարողանանք Պօղոս առաքեալի
նման ասել: «Զբարւոք պատերազմ պատերազմե-
ցայ, զընթացսն կատարեցի, զհաւատան պահեցի»:
Այսուհետեւ կայ և մնայ ինձ արդարութեան պը-
սակն, որում ամեն քրիստոնեայ հաւատացեալներ
Աստուած արժանի անէ, ամէն»:

Բ. ՔԱՐՈԶ

«Ճագ են բանք Քո ոտից իմոց եւ լոյս տան Շաղուաց իմոց» (Սաղ. ՃԺԸ. 105):

Դաւիթ մարգարէն, փորձով տեսնելով Աստուածային խօսքերի, Աստուծոյ լոյսի գերազանցութիւնը, բաց է անում իւր երախտագէտ սիրաը Աստուծոյ առաջ և գեղուն շնորհակալութեամբ ասում, Ով Տէր Աստուած, «Քո խօսքերն ճրագ են իմ ոտների համար և լոյս են տալիս իմ Ճանապարհներին»:

Մարդոյ կէսն հողից է բաղկացած և միւս կէսն Աստուծոյ Հոգուց: Այս պատճառաւ մարմինն շարունակ քաշ է տալիս հոգին դէպի մարմնաւոր իւրերն, դէպի անասնային կիլքերն, մէկ խօսքով դէպի կորստական Ճանապարհն: Խսկ հոգին շարունակ ձգտում է նմանիլ Հրեշտակներին, շարունակ ձգտում է դէպի երկինք, ջանք է անում միանալ իւր բանական շունչ փշող Աստուծոյ Հոգուն հետ: Ահա այսպէս հոգին ցանկանում է մարմնոյ հակառակը և մարմինն հոգու հակառակը, հոգին աշխատում է կատարել աստուածային գործ, մարմինն էլ աշխատում է կատարել իւր մարմնաւոր ցանկութիւնները: Հոգու և մարմնոյ այս կռիւն, այս պատերազմն շարունակուում է մինչեւ իրարից

բաժանուին: Այժմ պարզ երեսում է, որ մարդոց առաջ այս աշխարհում բացուած է երկու Ճանապարհի և երկու տեսակ Ճանապարհորդութիւնն: Երկու Ճանապարհն և Ճանապարհորդութիւնն էլ անպատճառ պէտք ունին երկու տեսակ ճրագի և երկու տեսակ լոյսի:

Մարմինն անշուշտ կարեորութիւն ունի ցերեկներն արեգակի, որ լուսաւորէ իւր բնակարանը, հասուցանէ իւր անդեան համար արտերը և պտուղները, կարօտութիւն ունի գիշերն էլ լուսնի, աստեղների և Ճրագների լոյսին, որպէս զի խաւարի մէջ չմնայ, մութին մէջ չխարխափի, այս ու այն կողմին չզարնուի և չվեասուի: Խսկ հոգին, որովհետեւ Աստուծոյ պատկերն է, անշուշտ կարեորութիւն ունի Աստուծոյ ճրագին և Աստուծոյ լոյսին, որ լուսաւորէ իւր բանականութիւնը և միտքը ու սիրաը և միշտ լոյս տայ այս կեանքի Ճանապարհորդութեան ժամանակ, որպէս զի այդ աստուածային լուսով ուղղէ մարմնոյ ընթացքը, անխօտոր առ աջնորդէ մինչեւ մարմնից բաժանուիլը և մարմնոյ նաւը անվասս հասուցանէ մինչեւ Աստուծոյ Աբքայութիւնն: Հոգու այս մշտավառ ճրագն և լոյսն են Աստուծոյ բերանից ելած խօսքերն: Սորա համար է ասում Դաւիթ մարգարէն, Ով Տէր Աստուած, Քո խօսքերն մշտավառ ճրագ են իմ երկրաւոր կեանքիս համար և լոյս են տալիս իմ հոգեւոր Ճանապարհներին: Եւ թէ, «Ճիրոջ պա-

տուիրաններն լոյս են և լուսաւորում են հոգու աշքերը։ «Եթէ Քո օրէնքներն չլինէին իմ խօսքերն (իմ սրտում անգիր արած և խօսած խօսքերը) ես վաղուց կը լինէի ուրեմն»։

Եթէ համեմատենք մարմինը հոգու հետ և մարմատոր ճրագը և լուսաւորները Աստուծոյ ճրագին և լուսաւոր խօսքերին հետ, անհամեմատ գերազանցութիւն կը գտնենք երկոցունց մէջ։ Ի՞նչ է մարմինն, եթէ ոչ հոգու շապիկը, որ հող է դառնում հոգին բաժանուելուց յետոյ։ Ի՞նչ են մարմատոր լուսաւորներն արեգակ լուսին և աստեղը, եթէ ոչ Աստուծոյ հրամանը ճշդիւ կատարող հրամանակատար սպասաւորներ, որք շատ անգամ խաւարուում են և որք վերջապէս սահմանուած օրում խաւարելու են յաւիտեան։ Ի՞նչ է ճրագի և մոմի լրան, եթէ ոչ մարդոց հնարած գործիքներ, որ ծառայում են մարդոց, բայց վերջապէս շուտ շուտ անցնում են, հնանում են և ոչնչանում մի օր։ Ի՞նչ է հոգին, եթէ ոչ Ս. Հոգու բանական շունչն և Աստուծոյ պատկերն։ Որ անմահ է իւր Ստեղծողի նման և յաւիտենական բոլոր արարածոց մէջ և գերազանց էակ զրեշտակաց նման։ Ի՞նչ է Աստուծոյ խօսքն մարդոց հոգիների համար, եթէ ոչ մշտավառ ջահ, անանցանելի լոյս, անխոտոր դեկավար, կենսատու օրէնք, աստուածապարգեւ պատուէր, հոգեմունունդ զօրութիւն և սուրբ սիրոյ կենդանի կրակ։ Կը գոյ մի օր, որ երկինք ու

երկիր կանցնեն իւրեանց բոլոր զարդերով, իսկ Աստուծոյ խօսքն բնաւ չանցնիր, այլ միշտ կը մնայ։ «Երկինք և երկիր անցցեն և բանք իմ՝ մի՛ անցցեն»։ Ուրեմն մարմինն հոգու համար է և հոգին Աստուծոյ համար։ Առանց մարմնաւոր սննդեան կը մեռնի մարմինն, և առանց հոգեւոր սննդեան, առանց Աստուծոյ խօսքի սննդեան կը մեռնի հոգին։ Աստուծոյ Արքայութիւնն լցուում է Աստուծոյ խօսքերը լսող և կատարող հոգիներով, իսկ զբժոխքն լցուում է Աստուծոյ խօսքերը լսող և հակառակը գործող հոգիներով։ Եթէ ամեն մարդ լրակը Աստուծոյ խօսքերը և կատարէր գործքով, գատարէ կը մնար գժոխքն։

Իմացած լինիք, սիրելիք, որ վերջին օրում յարութիւն առնելով դարձեալ միանալու են ամեն մարդոյ հոգի և մարմինն և միաւորուած ներկայանալու են Աստուծոյ արդար գատաստանին։ Այնուհետեւ հոգի և մարմին միասին վայելելու են թէ Արքայութիւն և թէ գժոխք։

Այժմ սիրելիք, թէ մեծ և թէ փոքր, թէ մարդ և թէ կին ամենքս էլ աշխատենք, որ հնազանդ ականջով լսենք Աստուծոյ կենսատու խօսքերը, ամենքս էլ աշխատենք, որ մեր մաքերի և սրտերի մէջ պահենք Աստուծոյ խօսքերը, աշխատենք շատ կարդալ ս։ Գիշը և չհասկացածները հարցնենք իմացողներին և սովորենք, որպէս զի ամենքս էլ վերջին օրում Դաւիթ մարգարէի նման կարու

զանանք ասելու Ո՞վ Տէր Աստուած: Քո խօսքերն լուսատու ձրագ եղան մեր կեանքու մ' և լոյս տուին մեր մարմնաւոր ճանապարհորդութեան մէջ: Ուրեմն, Ով Տէր, մեզ էլ արժանի արտ Քո անձառելի Արքայութեանդ, որ վայելենք Ս. Հրեշտակների հետ ամէն:



36/43
6008

Ճանանք ասելու Ո՞վ Տէր Աստուած: Քո խօսքերն լուսատու ձրագ եղան մեր կեանքու մ' և լոյս տուին մեր մարմնաւոր ճանապարհորդութեան մէջ: Ուրեմն, Ով Տէր, մեզ էլ արժանի արտ Քո անձառելի Արքայութեանդ, որ վայելենք Ս. Հրեշտակների հետ ամէն:

Գ. ՔԱՐՈԶ

Զգո՞յց եղիք, մի՞ արհամարհիք այս փոքրիկներից մէկը, ասում եմ ձեզ, որովհետեւ նոցա նրեւսակներն միշտ տեսնում են երկենում իմ Հօր երեսը, որ երկենումն է: Որովհետեւ Մարդոյ Որդին եկաւ կորուսեալները ապրեցնելու» (Մաս. ԺՂ. 10—11):

Կափառնայում քաղաքում քարոզում էր Յիսուս Քրիստոս: Մի քանի մայրեր իւրեանց փոքրիկ երախաները բերին Յիսուսի մօտ, որ օրհնէ իւրեանց երախաները: Աշակերտներն թող չտուին, արգելեցին, գուցէ մտածելով թէ փոքրիկներն ինչ պիտի հասկանային Փրկչի խօսքերից, մանաւանդ արգելք պիտի լինին Նորա քարոզին: Երբ տեսաւ Յիսուս՝ բարկանալով սաստեց իւր աշակերտներին և ասում է, «Թո՞յլ տուէք այդ մանուկներին ինձ մօտ գալ, և մի՛ արգելէք, որովհետեւ այդպիսիներինն է Աստուծոյ արքայութիւնն: Շշմարիա ասում եմ ձեզ, ով որ երկնից արքայութիւնը չընդունիր ինչպէս մանուկ, չմտնիր արքայութեան մէջ: Եւ երախաները առնելով իւր գիրկըն, ձեռնը դրաւ նոցա վերայ և օրհնեց» (Մարկ. Ժ. 13—16): Փրկիչն կամենում է այս խօսքերով մեզ հասկացնելու որ մենք երկնքի թագաւորութիւնը

Ժառանգելու համար՝ պէտք է ունենալը մանուկներին պէս խոնարհ հոգի, մաքուր սիրտ և աննենգ միտք:

Փրկիչն այս դէպքը յարմար պատճառ համարելով՝ լսողների ուշադրութիւնը դարձնում է փոքրիկների վերայ՝ ասելով: «Զգոյշ եղէք, մի՛ արհամարհէք այս փոքրիկներից մէկը, որովհետեւ նոցապահապան հրեշտակներն միշտ տեսնում են երկնքում իմ Հօր երեսը, որ երկնքումն է»: Մարդասէր Փրկիչ այս խօսքերից պարզ երեսում է, որ ամեն մարդ և կին, ծեր և պառաւ, տղայ և աղջիկ, որ քրիստոնեայ է, ունի մի մի պահապան հրեշտակ՝ Աստուծոյ կողմից յատկապէս յուղարկուած: Այդպէս է վկայում և Պօղոս սրբազն Առաքեալն ասելով: «Ե՞՞ո Հրեշտակներն ամենքն էլ հարկաւոր հոգիներ են, որք յուղարկուում են սպասաւորելու նոցա (հաւատացելոց) համար, որ ժառանգելու են փրկութիւնը» (Երր. Ա. 14): Ուրեմն մեր պահապան հրեշտակներն, որ գիշեր և ցերեկ հսկում և պահպանում են մեզ՝ մեր հոգիները՝ երբ տեսնում են որ իւրեանց պահպանութեան խընամոց յանձնուած մեծերն և փոքրերն արհամարհուում են ուրիշ մարդիկներից, անպատուում վշտանում և գայթակղուում են ուրիշների չար և մնասակար օրինակներից և ապականուում վարքով և բարքով, այնուհետեւ էլ չեն կարողանում համբերել: Այս, էլ չեն կարողանում համբերել պահապան հրեշտակներն, այլ միշտ գնումեն Հօր

Աստուծոյ մօտ, հաշիւ տալիս և բողոքում գանգատում վշտացնողների և արհամարհողների մասին և Աստուծոյ արդար բարկութիւնը շարժում: Որ վրէժխնդիր լինի և պատժէ այն մարդիկը և կինները, որք վշտացրել, արհամարհել և գայթակղեցրել են իւրեանց պահպանած անձերը:

Ուրբան հոգատար, որքան խնամուծու որբան բազմագութ է մարդացեալ Յիսուսն, որչափ քաղցըր, որչափ ողորմած և որչափ մարդասէր է որ ծնող մարդիկներից աւելի խնամք ունի մեծի և փոքրի վերայ, հարստի և աղքատի վերայ: Տեսէք թէ Փրկիչն մեզ ինչ աստիճան սիրում է որ մեզ վերայ էլ պահպան հրեշտակներ է դրել, որ պահպանեն մեր հոգիները թէ քնացած ժամանակ և թէ մեր արթուն եղած ժամանակ:

Քրիստոսի մի ամենամեծ շնորհըն էլ այս է մեզ համար, որ զգուշացնում է մեզ: Զգուշութիւնն միշտ հարկաւոր է մեզ, սիրելի եղբայրներ և քոյրեր, զգուշութիւն ուտելու և խմելու մէջ, զգուշութիւն խօսելու և գտանու մէջ, զգուշութիւն աղօթելու և խնդրուածքի մէջ, զգուշութիւն ընկերականութեան և գերդաստանի մէջ, զգուշութիւն մեր նիստ ու կացի մէջ և զգուշութիւն խրատելու և գասատիարակելու մէջ: Որովհետեւ փոքրիկներն, ինչ որ սովորում են թէ բարի և թէ չար, թէ լաւ և թէ վատ, թէ վարձք և թէ մեղք, թէ սիրել և

թէ ատել, թէ յարգել և թէ արհամարհել, բոլորն էլ մեծերից են սովորում, վասն զի ծնուած մանուկներն իւրեանց հետ աշխարհ չեն բերում այդ ամենը, այլ յետոյ սովորում են շրջապատող ներից: Ուրեմն ամեն րոպէ զգուշանալու է որ վատ և գայթակղեցուցիչ օրինակներ չսովորեն փոքրներն:

Շատ բնական է, երբ ձեր որդիքն և աղջիկներն և մինչեւ անգամ ծառաներն և աղախիներն անարգուումեն, անպատճուումեն և ծեծուումուրիշներից, դուք չեք կարողանում տանել այդ անպատճութիւնը, այլ վրէժինդիր էք լինում: Դուք բնաւ չեք կամենում որ ուրիշներն դպշեն ձեր աղնիւ գերգաստանի և սիրասուն զաւակների պատուին և բարոյականին և վշտացնեն ու դառնացնեն ձեր սրտերը և հոգիները և վրդովեն սուրբ գերգաստանը: Հաստատ իմացած լինիք որ ամբողջ Քրիստոնեաներն, որ կազմում են մի մեծ գերգաստան, Աստուծոյ զաւակներն են, խարութիւն չկայ, «Քանզի ամենեքին որդիք Աստուծոյ էք . . . չիք խտիր, ոչ հրէի և ոչ հեթանոսի, ոչ ծառայի և ոչ ազատի, ոչ արուի և ոչ իգի» (Թաղ. Գ. 26—28): Այս պատճառաւ Աստուծ էլ բնուտ չէ կամենում: որ վշտացնեն, անարգեն և անպատճեն իւր սիրասուն զաւակները: Այս, հաստատ իմացած լինիք որ Աստուծ ձեզանից շատ և շատ աւելի է սիրում իւր քրիստոնեայ զաւակները, մինչեւ անգամ սուրբ Հրեշտակներից էլ աւելի է սիրում, որ մար-

գոց վերայ կարգած է պահապան և սպասաւոր հրեշտակներ: Սորա համար է ասում Յիսուս, «Մի անարգէք այս փոքրիկներից մէկը, որովհետեւ նոցա պահապան հրեշտակներն միշտ տեսնում են իմ Հօր երեսը, որ երկնքումն է»:

Աստուծոյ արթոռն արդարեւ երկնքումն է, բայց Աստուծութեամբ ամեն տեղ է, առանց Աստուծոյ չկայ ոչ մի տեղ, «թէ ենեմ երկինքն, Դու այն տեղ ես և թէ իջնեմ Դժոխքն, Դու այն տեղ մօտ ես» ասում է Դաւիթ մարգարէն: Ամեն տեղ ներկայ է Աստուծ և տեսնում է մեր չգործածներն անգամ: «Զանգործս իմ տեսին աչք Քո և ի գիրս Քո ամեննեցեան զբեցան» (Սաղ. ԾՂ. 16):

Այս տեղ յարմար է պատմել հետեւալը: Մի անգամ մի մարդ իւր փոքրիկ որդու հետ գնում է գողութիւն անելու: Հայրն ասում է որդուն, «Որդի, լաւ նայիր և դիտիր չորս կողմերդ որ մեզ տեսնող չլինի, ես մանեմ այս տունն և գողանամ իմ հաւանած իրեղեններ»: Լաւ, հայրիկ, շատ լաւ նայեցի և դիտեցի ամեն կողմերս, բնաւ տեսնող չկայ մեզ: Բայց, հայրիկ, վերեւ էլ նոյեցի, վերեւից Աստուծ տեսնում է: Այս խօսքն այնպէս աղլում է հօր սրտի և հոգու վերայ, որ այնուհետեւ իսպառ թողնում է գողութիւնը մի փոքրիկ տղայի մի պարզ խօսքի շնորհիւ և լինում բարի մարդ:

«Որովհետեւ Մարդոյ Որդին եկաւ Կորուսեալ-

Ները ապրեցնելու: Ի՞նչպէս է թուռում ձեզ, եթէ
մի մարդ կունենայ հարիւր ոչխար, և նոցանից
մինն կմոլորուի, չթողի՞ր իննսուն և ինն ոչխարնե-
րը սարի վերայ և կը գնայ կորոնէ կը վնտրէ մոլո-
րուած ոչխարը: Եւ եթէ կը գտնէ այն մոլորուած
կորուած ոչխարը, ճշմարիտն ասում եմ ձեզ շատ
աւելի կուրախանայ գտնուած մի ոչխարի վերայ
քան թէ իննսուն և ինն ոչխարների վերայ, որ մո-
լորուած և կորուած չէին: Այսպէս Հայրս չէ կա-
մենում, եթէ կը կորչի այս փոքրիկներից մին»: Մար-
դոյ Որդին ինքն է Յիսուս Քրիստոս, Որ Մարիամ
Ս. կուսից մարմին առաւ Ս. Հոգւով, և այսպէս
Հօր Աստուծոյ Որդին մարդանալով կոչուեցաւ և
Որդի մարդոյ: «Որդի մարդոյ Յիսուս, ոզորմիր ինձ»
ինչպէս անուանում էին սովորաբար կոյրերն և ցաւա-
գարներն: Ոչխար բառը լսելով չկարծէք որ իրօք
ոչխար էր կորուսեալն ամենեին ոչ հապա կո-
րուսեալ էր մարդկութիւնն, կորուսեալ էր մար-
դոն, որ անբան ոչխարից շատ և շատ աւելի գե-
րազանց է Աստուծոյ համար: Աստուածային հո-
վիւն Յիսուս իւր հօտից (սիւրուից) ջոկած
և կորուսած չէր այդ բանական ոչխար մարդը:
հապա մարդն ինքն էր ջոկուել՝ անմոլար և Ս.
Հրեշտակաց հօտիցն և Ա. ամային սխալական բնու-
թեամբ մոլորուել, հեռացել և կորել հոգւով և
մարմնով և ընկել թշնամի գայլ սատանաների
ձեռքն:

Գայլ սատանաների ձեռքից՝ մարդ ոչխարի-
քաշած անտանելի նեղութիւնները տեսնելով, էլ-
չկարողացաւ երկար համբերել մարդասէր Հօր Աս-
տուծոյ Որդին: այլ թողեց երկնքում իւր անմո-
լար Հրեշտակաց հօտը, իւր Հօր հաճութեամբ
երկնքից իջաւ երկիրս, Ս. Հոգւով մարմին առաւ
Մարիամ Ս. կուսից, և ինչպէս աստուածային
հովիւ երեսուն և երեք տարի շարունակ կորու-
սեալ մարդու ետեկից շրջեց և վերջապէս գտաւ
Գողգոթայում Ս. Խաչի վերայ: Ինքն մեռաւ մար-
մնով խաչի վերայ և իւր աստուածախառն մարմի-
նը պատարագելով և Ս. արիւնը թափելով ազա-
տեց մարդու հոգին և բարձր ձայնով ասաց-
«Հայր, Քո ձեռքից եմ յանձնում իմ հոգին»
(Ղուկ. Իջ. 46). այսինքն Հայր Աստուած զիս
յուղարկեցիր, որ գտնեմ մոլորուած և կորուսած
մարդու հոգին: ահաւասիկ գտայ այն հոգին՝ իմ
մարմինը զոհ բերելով և զիշատիչ գայլ սատանա-
ների ճանկերից ազատելով: ահա Քեզ եմ յանձ-
նում, Հայր, իմ չարչարանաց արիւնով սրբագրո-
ծուած մարդու հոգին: Այնուհետեւ Յիսուս Փըր-
կին աւերում է դժոխքը և ազատում արդարոց
հոգինելը:

Ուրեմն, սիրելի եղբայրներ և քոյլեր և դուք
սիրելի զաւակներս, հիմի պարզ է ամեն ինչ: հիմի-
տեսանք թէ որքան մեծ է Փրկչի երախտիքներն
մեր վերայ: Ուրեմն այսուհետեւ ամեն ջանք գործ-

դնենք, որ այլ ևս չվշտացնենք, չանարգենք, չահպատւենք մէկզմէկ, գանգատաւո՞ր չանենք պահապան հրեշտակները. չաղթենք հօր Աստուծոյ բարկութեան վրէմխնդրութիւնը և չմոռանանք Յիշուսի Քրիստոսի շարչաբանքը, խաչելութիւնը, բեեռութիլը, ծարաւիլը, քացախը և լեղին ճաշակելը մեր փրկութեան համար։ Չմոռանանք որ Փրկի թափած արիւնովն ազատուած ենք մեղաց և մոլութեանց գերութիւնից. մէկզմէկ սիրենք ոյնպէս, ինչպէս Նա սիրեց մեզ և միշտ աղօթենք որ մեր ամենուս սրտերի մէջ ամեն ժամանակ վառպահէ Աստուծուած իւր անսահման մարգասիրութիւնը. ամէն:



«Պատուական է ամուսնությունն ամենեւին եւ սուրբ անկողինմ. բայց զունս եւ զպոննիկս դաշի Աստուած» (Եր. Ճ. Գ. 4):

Հայաստանեայց Առաքելական և Ս. Եկեղեցու
եօթն Սրբարար խորհուրդներից մինն է ամուս-
նութիւնն, որը սահմանած է սկզբում ինքն Աս-
տուած և անձամբ օրհնած Ադամայ և Եւայի
միաւորութիւնը երկոցունց համահաճ կամօք:

Ամենայն մասամբ պատուականն է այն ամուսնութիւնն, որով զուգ աւորուղ փեսան և հարսն չափահաս են, որք երկուքն ևս մէզդմէկ ընտրում եւ հաւանում են հասուն խելքով և համահած կամօք. որոց միանալու մէջ շկան չհասական արգելքներ և ազգապղծութեան անպատճուաբեր մերձաւորութիւն և սուրբ օրէնքից արգելուած ազգախառնութիւն և Քրիստոնէութեան նախատինք բերող պատճառ։ Այս՝ պատուական է ամուսնութիւնն, որով զուգաւորուղ փեսացուն և հարսնացուն զիրենք կոյս և սուրբ են պահում մինչեւ իւրեանց պսակուիլն և պսակագրութեան ժամանակ արած ուխտին հաւատարիմ են մնում Ս. ամուսնութեան՝ մինչեւ իւրեանց մահն։ Ամուսնու

թեան Ս. շինուածքը հաստատուն են պահում ամուսնացելոց մէջ Աստուծոյ երկիւղն, Ս. սէրն, անխախտ հաւատարմութիւնն և ուխտի վսեմութիւնն թէ՝ մարդոյ կողմից և թէ՝ կնոջ կողմից Այո՛, այսպիսի ամուսիններն պատիւ են բերում իւրեանց ազգին, Եկեղեցուն, օճաղին և բարի օրինակ լինում իւրեանց զաւակներին և շրջապատողներին և լինում են անդամ հասարակութեան և Քրիստոսի եկեղեցուն։ Արդարեւ ամեն մասամբ պատուական է այսպիսի ամուսնութիւնն եւ սուրբ սոցա անկողիներն։

Ընդհակառակն ամենեին պատուական չեն այն ամուսնութիւններն, որի պսակուողներն անշափահաս են և տարիքով անհամապատասխան միմեանց, որ միաւորութիւնը չեն ընտրում խելահաս եւ հասուն գիտակցութեամբ և երկու կողմից համարած կամօք, որ նշանուողների մէջ կան ընհասական արգելքներ, ազգապղծութան անպատուաքեր մերձաւորութիւն, ո. օրենքից արգելուած ազգախառնութիւն և Քրիստոնէութեան նախատինք բերող առիթ։ Ամենեին պատուական չեն այն ամուսնութիւններն, որովք զուգաւորող փեսացուն և հարսնացուն, զիրենք կոյս եւ սուրբ չեն պահում մինչեւ պսակուելու օրն և պսակուելուց յետոյ ուխտազանց են լինում ո. ուխտին։ Երբ պսակուածներից մին հաւատարիմ է, միւսն անհաւատարիմ ո. պսակին, կամ մարդ և կին անհաւատարմու-

թեամբ ծռուում են սրբասիրութիւնից, տան մէջ մտնում է անբարոյականութիւն, Խզուում է վըստահութիւնն, հեռանում է հաւատարմութիւնն, պղծուում է սրբութիւնն, հալածուում է Աստուծոյ երկիւղն, քայքայուում է ամուսնութեան աշխնուածն և կործանուում է սիրոյ սիւնն։ Այնուհետեւ մուտ են գործում ամուսինների սրտերի մէջ ատելութիւն, խոռվութիւն, կոփու հեռ, չար նախանձ, ոխակալութիւն եւ նենգութիւն։ Ամենեին սուրբ չե՞ն այսպիսի ամուսինների անկողիններն, այլ պիղծ այլ նախատինք Ազգին, անպատուութիւն եկեղեցուն, անարգութիւն օջաղին, չար օրինակ զաւակաց և գայթակղութիւն դրացեաց։ Կրկնում ենք, ոչ պատուական է այսպիսի ամուսնութիւնն և ոչ սուրբ նոցա անկողինն և ոչ ամուսիններն անդամ են Քրիստոսի։ Որպէս զի փեսան և հարսն այլ և կին մինչեւ իւրեանց մահն սիրով եւ անբաժան ապրեն միհասին, Պողոս սրբազն Առաքեալն յորդորում է ամուսինները։ Միմեանց հնազանդ եղեք Քրիստոսի երկիւղովն։ Կանայք հնազանդ լինելու են իւրեանց մարդոց ինչպէս Աստուծոյ, որովհետեւ կնոջ գլուխն մարդնէ, ինչպէս և Քրիստոս զլուխն է Եկեղեցու, և ինքն է Փրկիչ մարմնոյ։ Այսու ամենայնիւ ինչպէս եկեղեցին հնազանդ է լինում Քրիստոսին, նոյնպէս և կանայք հնազանդ լինելու են ամենբանի մէջ իւրեանց մարդոց։ Մարդիկ սիրեցէք ձեր կիները ինչպէս և Քրիստոս սիրեց եկեղեցին, և իւր անձը մատնեց նո-

րա համար, որպէս զի աւագանին սրբութեամբ սըրբացնէ եկեղեցին, որ կանգնեցնէ ինքնիւր զիմացն նոյն փառաւոր Եկեղեցին, որպէս զի չունենայ ոչ մի արատ կամ աղտեղութիւն կամ ուրիշ այսպիսի պակասութիւն, հապա որ լինի սուրբ և անարատ: Նոյնպէս պարտաւոր են մարդիկ սիրել իւրեանց կիները, ինչպէս իւրեանց մարմինները, ով որ սիրումէ իւր կինը, սիրումէ իւր անձը: Ոչ ոք բնաւ չէ ատում իւր անձը, այլ սնուցանումէ և գարմանում, ինչպէս և Քրիստոս իւր Եկեղեցին, օրովհետեւ նորա մարմնոյ անդամներն ենք և նորա մարմնից և նորա ոսկերներից: Այս պատճառաւ կը թողու մարդ իւր Հայրը և մայրը և կը գնայ իւր կնոջ ետևից և երկուքն էլ կը լինին մի մարմին: Այս խորհուրդն մեծ է, բայց ես ատում եմ Քրիստոսի և Եկեղեցու համար: (Ծփես. Ե. 21—22): Սրբազն Առաքեալն կամենումէ մեզ ասել— ինչպէս Քրիստոս պսակուելով Եկեղեցու վերայ, իւր հետ միացոյց Եկեղեցին և եկեղեցին միանալով Քրիստոսի հետ եղաւ մի մարմին, այնպէս էլ փեսան կամ մարդն պսակուելով հարսի կամ կնոջ հետ, միանում են միմեանց հետ և լինում մի մարմին և միանում Քրիստոսի հետ: Ահա այս է ամուսնութեան խորհրդի մեծութիւնն:

Երբ մարդ մտնում է մի դռնով, տեսնում է որ տան մարդոյ և կնոջ մեջ կայ սէր, միաբանութիւն և համաձայնութիւն, խսկոյն զգում է որ այն տան մարդոյ և կնոջ մեջ չկայ բնաւ սէր, միաբանութիւն և համաձայնութիւն, իսկոյն զգում է որ նոյն տանից անպակաս են կոիւ և խոռվութիւն, յարատեւ ատելութիւն, զառն կենակցութիւն, թունաւորուած կեանք, տիրալի սրտեր, վրդովուած մտքեր և անմիթար հողիներ: Հիւրն զգում է որ ինքն գտնուում է ոչ թէ Աստուծոյ գերգաստանի մէջ, այլ մի անախորժ տեղում: Արդեօք այսպիսի գերգաստաների ծոցում մեծացող տղայ և աղջիկ ի՞նչ կը սովորին իւրեանց ծնողներից, արդեօք ի՞նչ տեսակ ապագայ ամուսիններ կը լինին այդ անմեզ գառնուկներն, արդեօք ի՞նչպիսի Հայր և մայր կը լինին, ի՞նչպիսի անդամ Հայ հասարակութեան և Հայաստանեաց ՍԵկեղեցու, և ի՞նչպիսի դաստիարակ իւրեանց զաւակաց Համար ապագայում: Որովհետեւ փոքրներն ինչ որ տեսնում են մեծերից, այն են սովորում թէ բարի և թէ չար, թէ լաւ և թէ վատ, թէ օգատակար և թէ վնասակար, թէ առաքինութիւն և թէ մոլութիւն, թէ վարձք և թէ մեղք:

Ամուսնութեան ամբողջ շենքը սրբութեան մէջ կանգուն և անխախտ պահպանողն էին աստուածութիւն, թէ վարձք և թէ մեղք:

Ֆային երկիւղն և հաւասարակշիռ ս. սէրն երկու ամուսնացելոց կողմից: Բայց մօղան, անիծեալ մօղան երբ մուտ գործեց հայ սրբասէր գերդաստանների մէջ, հալածեց Աստուծոյ երկիւղը և խախտեց հաւատարմնաթեան ս. ուխտը, խլեց հայ գերդաստանների ծոցից ազգային պատուաքեր սովորութիւնները և ներմուծեց անպատուաքեր սովորութիւններ: Այս՝ մօղան, նզովեալ մօղան կողոպտեց պարզակեցութիւնը և հաստատեց շռայրութիւն. յափշտակեց ս. սէրը և տարածեց ոխերիմ ատելութիւն. հեղեղի նման քշեց տարաւ պարկեշտութիւնը և համեստութիւնը ամօթխաժութիւնը և ազնուութիւնը, պատկառանքը և սրբութիւնը և լցուց ընտանեկան յարկերը խռովութեամբ և կուռփ անպարկեշտութեամբ և ամուսնալուծութեամբ, անբարոյականութեամբ և անբժշկելի ցաւելով: Այս՝ մօղան սուրբ ամուսնութիւնը փոխեց շահավաճառութեան, աստուածագիր պոակը՝ սակարկութեան, բերտու Հայոց համար նոր տեսակ մարդավաճառութիւն և բարոյական մահտարաժամ, որ տարածուած է հայ երիտասարդաց սրտերի մէջ. և միանդամայն թշուառացուց և բարոյապէս սպանեց բազմաթիւ անմեղ, բայց աղքատ և պարկեշտ օրիորդներ և սպառնում է օրէցօր ջնջել հայ ազգութիւնը: Այսօր միայն Ռուսահայոց մէջ կան հազարաւոր չպատկուած 50 տարեկան հայ երիտասարդներ և 40

տարեկան օրիորդներ շնորհիւ մօղայի: Ամեն մարդ սպանում է պատահած թունաւոր օձերը և կարիճները, բայց մերայինք դեռ սնուցանում են իւրեանց ծոցերում ազգութիւնը բնաջինջ անող մօղան: Կանանց, հարսանց և օրիորդաց համար ամենաթանկագին և աստուածալին անկողոպտելի զարդերն են պարկեշտութիւն համեստութիւն, ազնուութիւն և ս. սէր: Այս զարդերն ոչ մաշուում են և ոչ հնանում: Ոսկեղէն և քարեղէն և արծաթեղէն զարդերն ոչ ինչ են համեմատելով այդ առաքինութեանց հետ:

Խոհեմ մարգիկ և խոհեմ ազգեր մտածում են սնցեալի վերայ, հեռատեսում են զալիք պատգան և բարեկարգում են ներկան և առաջիկան: Եթէ յանկարծ գերեզմաններից ելնէին մեր հանգստցեալ պապերն և տատերն, հայրերն և մայրերն, արդեօք չէին նախատել և յանդիմանել մեզ՝ ասելով. «Մենք ամուսնութիւնը սրբութեամբ պահպանելով աւանդեցինք ձեզ, որ գուք էլ նոյնը սրբութեամբ աւանդէիք ձեր որդւոց և թռոանց բայց գուք աւանդում էք նոցա զեղծում և ապականութիւն»:

Սուրբ Դիլքն երբ ասում է, «Պատուական է ամուսնութիւն ամենեւին և սուրբ անկողինք» իսկոյն վճռաբար շարայլում է. «բայց զշունս եւ պպոնիկս դատի Աստուած»: Սուրբ է Աստուած արդար և գրած է սրբարար օրէնքներ: Օրէնք-

ները սրբութեամբ պահէելով արդարե սուրբ կը լի-
նինք ամենքս էլ: Տեղուժեանց օրէնքները չպա-
հողներն անուանուում են զող, աւազակ, մար-
դասազան, ևն: Աստուծոյ ամուսնութեան համար
սահմանած՝ օրէնքի գէմ գործող խառնակեաց
մարդն և կինն անշուշտ կոչուելու էին շուն, շնա-
ցեալ, պղոնիկ և Քրիստոսի մասնակցութիւնից
կարուած և նետուած ապականեալ անդամ, ևնու
թիւ մարմնաւոր թագաւորների օրէնքները քան-
դողներն սաստիկ պատժուում են, որչափ և տ
առաւել Երկնային թագաւոր Աստուծոյ օրէնք-
ները և պատուիրածները քանդող և ոտնակոխ
անողներն պատժուելու են նոյն իսկ հոգւով և
մարմնով: Ամենեին ժամանակաւոր չինիլ Աստու-
ծոյ տուած պատիմն, այլ յաւիտենական և
մշտնջենաւոր: Աստուած բնաւ կարօտ չէ քննու-
թեան և վկաներէն քանզի սրտագէտ է, Աստուծոյ
դատաստանն կարճ կը լինի և սարսափելի: «Եր-
թայը յինէն անիծեալք ի հուրն յաւիտենից»:

Ուրեմն՝ սիրելի զաւակներս, ամեն կերպով
զգուշացէք և աշխատեցէք որ այսուհետեւ սիրով
ասպեքտ այր և կին միմանց չետ. հեռացէք չհաս-
ազդախառնութիւնից և պոռնկական սրբադղու-
թիւնից, հեռացուցէք ձեր յարկերից մօգան ինչ-
պէս թունաւոր օճեր և կարիծներ, որ սրբութին
ձեր բնակարաններն։ Աշխատեցէք մաքուր պահել
ձեր սրտերի և հոգիների սուրբ տաճարները, և

լնաւ գայթակղութիւն և չար օրինակ չտալ ձեր
զաւակներին և շրջապատողներին։ Աշխատեցէք ձեռք
առնել և ամուր պահպանել ձեր պապերի և նախ-
նեաց ընտանեկան կենաց սրբութիւնը և խաղա-
ղութիւնը ձեր յարկերի մէջ, որ է այս աշխարհի
երջանկութիւնը և դատաստանի օրում արժա-
նանալ «Եկայք օրհնեալք Հօր իմոյ» քաղցր ձայ-
նին։ Ամէն։

Ե. ՔԱՐՈԶ

«Գրեցի ձեզ, Երիտասարդներ, որ դուք զօրացած էք եւ Աստուծոյ Բանն (Յիսոս Քրիստոս) բնակում է ձեր մէջ, եւ դուք յաղթեցիք չարին: Մի սիրեք աշխարհը. եւ մի՛ սիրեք ինչ որ կայ աշխարհի մէջ: Եթէ մէկն սիրում է աշխարհը, նորա մէջ չկայ Հօր Աստուծոյ սէրն, որովհետեւ այն ամենն որ աշխարհումն է՝ ցացկութիւն է մարմնոյ, եւ ցանկութիւն է աչաց եւ ամբարտաւանութիւն այս կեանի, որ Հօրից չէ, այլ այս աշխարհից է: Աշխարհս էլ կանցնի նորա ցանկութիւնն էլ. իսկ ով որ կառնէ Աստուծոյ կամքը, նա կը մնայ յահիսեան» (Ա. Յով. Բ. 14—17):

Շատ բնական է այս, աշխարհիս փորձառու հայրերն միշտ խրատ և յորդոր են գրում իւրեանց անփորձ զաւակաց, որպէս զի զգուշացնեն կեանքի մէջ պատահելիք վտանգներից և փորձանքներից: Այսպէս անում է և փորձառու Յօվհաննէս սրբազն աւետարանիչն, որ իւր ընդհանուրական թղթով խրատում, յորդորում, քաջալերում և զգուշացնում է իւր հոգեոր զաւակները:

Երիտասարդ բառը լսելով չկարծէք թէ միայն մարդոց համար գրած է ս. աւետարանիչն այս խրատաները, այլ և չափահաս օրիորդաց և հարսանց և կանանց համար էլ գրած է: Որովհետեւ կարելի չէ տան կէսը խրատել և կէսը անխրատ թողնել, տան կէսը կրթել և կէսը անկիրթ թողնել, արականները դաստիարակել և իգականները թողնել առանց դաստիարակութեան: Շատ իրաւունք ունէր ս. աւետարանիչն գրելու և զգուշացնելու, վասն զի 15 տարեկանից մինչև 35 տարեկան հասակ ունեցող երիտասարդ մարդոց, օրիորդաց և կանանց ետելից՝ ամեն քայլափոխում միշտ շրջում են փորձանքներն և մեղքերն, ինչպէս որ սովազուկ գայլերն միշտ շրջում են ոչխարի և գառների ետելից, որ յափշտակեն և պատառոտելով լափեն:

Գրեցի ձեզ, Երիտասարդներ, որ դուք զօրացած էք. կամենում է ասել, ովկ երիտասարդներ, դուք արդէն չափահաս էք, արդէն զարգացած է ձեր բնականութիւնն, լուսաւորուած են ձեր միտքն ու հոգին և հասունցած է ձեր գիտակցութիւնն, այսուհետեւ կարող էք ճանաչել բարին և չարը, օգտակարը և վնասակարը, վարձքը և մեղքը, հոգու բարեկամը և թշնամին: Մանաւանդ որ դուք զօրացած էք Աստուծոյ խօսք Յիսուս Քրիստոսով, որ բնակում է ձեր մէջ, ձեր սրտերի տաճարումն: Այդպէս է ասում և ինքն Փրկիչն:

«Եթէ ոք սիրէ զիս և զբանն իմ պահեսցէ, և Հայր իմ սիրեսցէ զնա. և առ նա եկեսցուք և օւթանս առնմա արասցուք» (Յով. ԺԴ. 23): Ի՞նչ անդուգական փառք, ի՞նչ աննման պատիւ, ի՞նչ գերազանց սէր հողեղէն մարդոց համար: Որովհետեւ այն Աստուածութիւնն—Հայր, Որդի և Ս. Հոգի—Որ բնակում է Սերովբէների և Քերովբէների մէջ, հաճած է բնակիլ ձեր սրտերի մէջ: Որտեղ որ բնակում է Աստուած, այն տեղից հալածում են ամեն տեսակ չարութիւն, մոլութիւն, մեղք և չար գեեր: Ահաւասիկ սորա համար է տսում Աւետարանիչն, երիտասարդներ գուք զօրացած էք Աստուածութեան ներկայութեամբ. գուք յաղթեցիք երիտասարդական մեղաց և չար ցանկուցեանց, վասն զի գուք Աստուծոյ որդիներն էք և Աստուծոյ պատկերներն:

Ա՛խ, երիտասարդ սիրելի զաւակներս, աղաչում եմ, գուք ամեն ջանք ի գործ դրէք, որ ձեր սրտերից չհեռացնէք զօրացնող Աստուածը, սրբացնող Աստուծոյ ներկայութիւնը: Որովհետեւ Աստուած բնակում է սուրբ տեղերում, եթէ մենք մեր անվայել զործերով հեռացնենք Աստուած մեր սրտերից, այնուշետեւ պարապ և դատարկ չեն մնար մեր սրտերն, այլ կը լցուին ամեն տեսակ վատ մուստոթիւններով, չար խորհուրդներով. այնուշետեւ մեր սրտերն կը դառնան սատանաների բնակարան: Աղաչում եմ ձեզ, երիտասարդ զա-

ւակներս, լաւ մտածեցէք, այս, լաւ մտածեցէք, որ ձեր ս, ամուսնութեամբ և որդենութեամբ է շարունակուում Հայոց ազգի պահպանութիւնն և կանգուն ու պայծառ մնում՝ Հայաստանեայց Ս. Եկեղեցին:

Ա՛խ, ի՞նչպէս հասկացնեմ ձեզ Հայոց եկեղեցու ցաւերը և դառն տրտմութիւնը, որովհիետեւ անկարանում է բացատրել ձեզ գրչի լեզուն:— Այսօր աեսնում ենք հազարաւոր չպսակուած և ծերութեան ու պահաւութեան հասակն մանող հայ երիտասարդներ և օրիորդներ: Ա՛խ, սիրելի, երիտասարդներ, միթէ գուք խորին ցաւ չեք զգում ձեր այդ վիճակի վերայ միթէ գուք չեք զգում մեր եկեղեցու ներկայ և ապագայ զրութիւնը, միթէ գուք չեք մատածում, որ չամուսնանալով կորուսանում էք ձեր գարուն հասակը, թունաւորում էք ձեր կեանքը, գառնացուցանում ձեր հոգիները, վատ խորհուրդների բնակարան շինում ձեր աստուածաբնակ սրտերը, վշտացնում ձեր ծերունազարդ և պառաւեալ ծնողները, որ հարսի կարօտ ախ քաշելով մեռնում են: Միթէ գուք չեք իմանում, որ չամուսնանալով ընտրում էք ձեզ համար ուրիշ ծնանապարհ, որ ատելի է Աստուծոյ և մարդոց և միանգամայն անպատուարեր ձեր օճառին, ձեր հայ անուան, ձեր եկեղեցուն և կործանիչ ձեր անձին: Միթէ չեք իմանում, որ չամուսնանալով թառամում է ձեր ծա-

ղիկ հասակն, խորշոմում է ձեր առողջ տեսքն, կնճռոտուում է ձեր գեղեցիկ դեմքն, քայլայուում է ձեր ամուր կազմուածքն, ոչնչանում է ձեր որդենութեան անգին զօրութիւնն, արագանում է ձեր անմիտար ծերութիւնն և խսպառ հեռանում է ձեր սրախ տաճարներից Աստուածութիւնն: Առանց արեգակի և լուսնի ի՞նչ է աշխարհս, առանց պտուղների ի՞նչ են տանձի և խնձորի ծառերն, առանց անուշահոտ վարդի ի՞նչ են վարդենու թուփերն, առանց խելքի ի՞նչ է մարդն, առանց երեխայի ի՞նչ է տունն, առանց ամուսնութեան ի՞նչ է երիտասարդն, առանց Աստուծոյներկայութեան ի՞նչ է սիրտն: Հաւ մտածեցէք սիրելի զաւակներու:

Երիտասարդներն չամուսնանալու գլխաւոր պատճառը վերտգրում են օրիորդաց ծանր պահանջներին, ինչպէս են նոր նոր տեսակ զգեստներ և նորելուկ զարդեր: Իսկ օրիորդներն, գլխաւոր պատճառները վերտգրում են երիտասարդներին, պատճառաբանելով թէ «երիտասարդներն կամ ազատօրէն պահում են մի մի օտարազգի աղախին և կամ պահանջում են մեր ծնողներից մեծաքանակ օժիտ դրամ՝ կամ կալուած: Եւ որովհետեւ մեր ծնողներից շատերն աղքատութեան պատճառաւ անկարող են լինում կատարել այդ պահանջները, այս պատճառաւ էլ սպիտակում են մեր մազերն և մենք մնում ենք

վեր ընկած մեր ծնողաց տներում և դատապարտուած մեր սեւ օրերը տնիցկացներու: Բացի սորանից երիտասարդներն եթէ ամուսնացած լինէին, այնքան փող չէին խարջել, որքան վատնում են անվայել ճանապարհով . . . : Այս պատճառաւ էլ արհամարհուած են Հայոց պարկեցա, ամօթխած և ազնիւ օրիորդներն »:

Հայոց երիտասարդներ, երկու կողմից էլ ուղիղ չեն ձեր գանգատանաց պատճառներն: Երկու կողմից զեղծմանց զլիսաւոր և միակ պատճառն է նկամուտ սովորութիւնն, որին անձնատուր եղած էք, և որն պատճառ եղած է ձեր անտանելի թշուառութեան և Հայոց ազգի նուազութեան: Դուք տեսած կը լինիք, երբ վարարում են գետերն քշում ու տանում են հեղեղի բերանն ընկած մարդ, անասուն և գրաստ և խեղդելով սպանում: Նմանապէս եւրոպական այդ չամուսնանալու և սակարկութեամբ օժիտ դրամներ պահանջելու սովորութեան հեղեղներն քշեցին և տարան բուն հայկական ընտիր և ազգային սովորութիւնները, պատկառանքը և ամօթխածութիւնը, պարզակեցութիւնը և սրբութիւնը, հաւատարմութիւնը և վստահութիւնը: Նզովեալ սովորութիւն, որ բոցիր հայ երիտասարդների համար լայն և ընդարձակ, բայց աստուածատեաց ճանապարհ, գրաւեցիր հայ օրիորդաց սրտերը սնուտի և կորստական պարդերով և թշուառացուցիր, պատժեցիր հայ քաղաքացի

արական և իգական երիտասարդները և լցուցիր
ամեն տուն ախով ու վախով . . . :

Հայոց երիտասարդներ, ամուսնութեան բուն
որամազլուխն է երկու կողմից հաւասարակշիռ
սէրն. ամենաթանկագին օժիտն է երկուստէք հա-
ւատարմութիւնն. անսպառ զանձն է համամիտ և
համակամ քաղցրութեամբ կենակցիլն, անմահա-
կան պոտողներն են ծնած զաւակներն և մարդ-
կութեան համար Աստուծուց սրբագործեալ միակ
ճանապարհն է ս. ամուսնութիւնն. Ռւրեմն ի՞նչ-
պէս է ներում ձեր խիղճն ամուսնական սրբու-
թիւնը փոխել անառակ կենակցութեան հետ, տան
տիկինը՝ աղախնու հետ. սուրբ ուխտի պսակը՝
կորստական օժիտների հետ, որդեծնութիւնը՝ ան-
ցաւոր զարգերի և զգեստների հետ, անմահ հո-
գին՝ վաղանցուկ ցանկութեանց հետ. ի՞նչ հարկ
մինչև ձեր մահն թշուառացուցանել ձեր ամբողջ
կեանքը:

Հերիք է, թողեք այդ օտարամուտ սովորու-
թիւնները, որ անքուն որդի նման գիշեր ցերեկ
կրծում են հայ ազգութեան արմատը, օրինակ
առեք գոնէ հայ գիւղացի երիտասարդներից և
օրիորդներից, որք արհամարհելով այդ ազգակոր-
ծան սովորութիւնները և միշտ հետեւելով իւրեանց
պատերի զուտ հայկական սովորութեանց ժամա-
նակին ամուսնանում են որբութեամբ առանց
օժտի և ծնանում զաւակներ, որք տուների շէնքն

ու շնորհըներն են և քաղցրախօս միւլքիւներն:
Ամուսնացէք և գուք քաղաքացի երիտասարդներ,
պինդ բոնեցէք ձեր պատերի ընտիր սովորութիւ-
նը, որով ծնած և սնուցած են ձեզ. Ամուսնացէք
միմիայն հայ օրիորդների հետ հետեւելով «Ճպատդ
քոլադ կտրի» առածին. որովհետեւ հայ օրիորդն լաւ
գիտէ ձեր լեզուն, ձեր սովորութիւնները և ձեր
եկեղեցու արարողութիւնները, ծէսերը և տօները:

Օժիտների վերայ յոյս գնողներն իւրեանց
յոյսը կարում են նախախնամող Աստուծուց, ձեր
յոյսը Աստուծոյ վերայ դրէք, որ յաւիտենական-
է և մշանցենաւոր. ձեր յոյսը օժիտ դրամների
վերայ մի՛ գնէք որ վաղանցուկ է և կորստական:
Սորա համար է ասում ս. աւետարանիչն. «Եթէ
մէկն սիրում է աշխարհը, նորա մէջ չկայ հօր
Աստուծոյ սէրն, որովհետեւ այն ամենն՝ որ աշ-
խարհի մէջ է (և մնում է աշխարհում), ցանկու-
թիւն է մարմնոյ և ցանկութիւն է աշաց և ամ-
բարտաւանութիւն այս կեանքի, որ Հօրից չէ, այլ
այս աշխարհից է: Աշխարհս էլ կանցնի, նորա
ցանկութիւնն էլ. իսկ ով որ կառնէ (կը կատարէ)
Աստուծոյ կամքը, նա կը մնայ յաւիտեան»:

Ազնիւ երիտասարդներ մի՛թէ գուք անհնա-
րին ցաւ չէք զգում. տեսնելով որ ձեզանից շա-
տերն գնում են Նւրուպա՝ առողջ, կայտառ, գե-
ղեցիկ, պնդակազմ և աշխայժ, բայց զալիս են
հիւանդ, նիհար, քայրայուած մարմնով, այլան-

դակուած տեսքով, վարակուած անցիւթելի ախ-
տով, և իւրեանց հետ բերած հիւանդութիւն-
ներով խոշերայի նման վարակում են և իւրեանց
գերդաստաննելը:

Այժմ աղաջում եմ, սիրելի զաւակներս, բաւական է. անցածն անցաւ գնաց, այժմ դէ՛ մի յետ նայեցէք, ձեր անցեալ սխալներից օգուտ քաղեցէք, ձեռք առէ՛ք ձեր պապենական սովորութիւնները, հեռացէ՛ք օտարամուտ վնասակար սովորութիւններից, ողջախոհութեան օրինակ առէ՛ք ձեզ համար՝ ձեր հասակակից ողջախոն Յովսէկի գեղեցիկը, Դանիէլ մարգարէն, Յովհաննէս աւետարանիչը, Հռիփսիմէ Կոյսը և ս. Աստուածածինը: Սրբասէր բարեկարգութեան մէջ հաստատեցէ՛ք ձեր ներկան և ապագան, յարգեցէ՛ք ս. ամուսնութեան օրէնքը, դարձեալ բնակեցրէ՛ք ձեր մէջ—ձեր սրբատերում Յիսուս Քրիստոս և զօրացէ՛ք Աստուածութեան ներկայութեամբ: Այն ժամանակ ձեր ծնողաց հետ՝ ես միիթարուած ծիրունիս էլ Յովհաննէս աւետարանչի պէս ուրախութեամբ լցուած կասեմ: «Գրեցի ձեզ՝ երիտասարդներ, որ գուք զօրացածէք և Աստուած Բանն բնակում է ձեր մէջ. և գուք յաղթեցիք չարին»: Ամէն:

g. բԱՐՈԶ

«Քրտամբք երեսաց բոց կերիցես զիաց բն, մինչեւ
դարձիս յերկիր» (Ծնն. Գ. 19):

Փո ճակատի քրտինքներով կուտաես քո հացը,
մինչև որ կը գառնաս երկիրն, այսինքն մինչև քո
մեռնելու օրն պարտաւոր ես աշխատութեամբ
ապրել, քո ճակատի քրտինքներով կերակրուիլ և
մեռնելուց յետոյ թաղուիլ հողի մէջ։ Շատերն
կարծեցին թէ Աստուծոյ այս վճիռն սարսափելի
պատիժ էր առաջին մարդոց և նոցա հետագայ
սերնդոց համար։ Բայց երբ ուշադրութեամբ նա-
յենք բնութեան օրէնքներին, կը տեսնենք որ Աս-
տուծոյ ամենամեծ օրհնութիւնն է այս վճիռն
մարդկութեան համար։ Որովհետեւ տեսնում ենք
որ միշտ շարժման և աշխատանաց մէջ են Աս-
տուծոյ բոլոր արարածներն, ոչինչ չկայ պարագ
և անգործ։ Երբ բարձրացնում ենք մեր աչքերն
դէպի երկինք, տեսնում ենք որ անդադար շարժ-
ման և գործունէութեան մէջ են արեգակն, լու-
սինն, աստեղներն, մոլորակներն, ամպերն և թթու-
չուններն և նոյն իսկ օդն։ Երբ նայում ենք մեր
չորս կողմերն, տեսնում ենք որ բոլոր անաստե-

ներն, գազաններն, սողուններն, գեռուններն միշտ շարժման մէջ են և աշխատութեամբ են ձարում իւրեանց ուտելիքը և խմելիքը և պահպանում իւրեանց կեանքը մինչեւ իւրեանց վերջին շունչն Ազբւրներն, գետերն և առուակներն շարունակ վազելով են պահպանում իւրեանց կենդանութիւնը, ծովերն՝ անընդհատ շարժուելով և ալեկոծուելով և ծառերն ու բոյսերն՝ օդի մէջ տարութերուելով:

Այս բոլոր արարածոց մէջ բացառութիւն չէր կարող լինել մարդն, որ մարմնով հողեղինաց շարքումն է, իսկ բանական հոգւով՝ հրեշտակաց շարքումն, այլ պարտաւոր էր շարունակ աշխատել և գործել և իւր քրտնաթոր աշխատութեամբ պահպանել մինչեւ իւր մահուան օրն իւր կեանքը և իւր գերդաստանի կենդանութիւնը: Հոտում են անշարժ և լճայած ձահիճներն ու ջուրերն, քոստուում են ծոյլ չներն ու կատուներն և սովոծութիւնից շատ անգամ մեռնում են ծոյլերն և ուլացող մարդիկ, թող զանազան հիւանդութիւն: Օրհնեալ վճիռ, օրհնեալ քրտինք, օրհնեալ աշխատութիւն և օրհնեալ գործունէութիւն: Այս օրհնուած է աշխատութիւնն և մինչեւ անգամ սուրբ: Այս ժրաշան աշխատութեաց և դառն քրտանց քաղցր պտուղներն են շոդենաւերն, երկաթուղիներն, հեռագիրներն, հեռախօսներն, զանազան մեքենաներն և ընտիր արհեստներն, որք

միշտ ծառայում են մարդկութեան և մատակարարում մարդոց ամեն տեսակ մարմնաւոր դիւրութիւններ և բարիքներ: Աւելորդ է ասել ո՞ր կաղերի, կոյրերի և անդամալոյժների աշխատութեան համար անգամ այժմ հնարուած են տեսակ տեսակ գործիններ, որպէս զի ջմնան պարապ և անգործ և շուտեն ձրի հաց, այլ տպրեն իւրեանց ձեռքի աշխատանքով և ճակատի քրտինքով:

Դուք տեսած կը լինիք, սիրելի եղբայրներ, քոյրեր և զաւակներս միշտ աշխատող մարդ և կին, ծերունի և պառաւ, տղայ և աղջիկ, թէ ինչպէս առողջ, կայտառ, աշխոյժ, եռանդուտ և գործող են լինում աշխատութեան շնորհիւ: Ճեսած կը լինիք նաև արհեստաւոր մարդիկ, մշակներ, բեռնակիններ և տան ու խոհանոցներում անձամբ աշխատող տիկիններ, թէ ինչպէս ախորժակով են ուտում հացը և կերակուրը և խմում պարզ ջուրը, դիւրաւ մարսում կերածները և հանգիստ քնանում քաղցր քնով: Սոյնպէս տեսած կը լինիք և անգործ, պարապ, նստակեաց ու դանդաղ մարդիկ և կանայք, որք միշտ գանգատում են ասելով, «Ախորժակ չունինք, կերած կերակուրներից» համ չենք առնում, կերածներս չենք մարսում, գիշերներն էլ հանգիստ չենք քնանում, շատ ժամանակ էլ անհանգիստ ենք լինում, ևլու: Այդ ամենի պատճառն այն է որ այդպիսի մարդիք և կանայք փախչում են աշխա-

խատութիւնից և զանազան չնչին պատճառներով
անհնաղանդ գտնուում Աստուծոյ արդար վճռին,
«Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քումին»
չե զարձցիս յերկիր»:

Երենքի հրեշտակներն անգամ պարսպան
անգործ չեն, ինչպէս յիշած ենք մեր ջորքարողին
մէջ, նոքա էլ ունին իւրեանց աշխատութիւնները
և հաւատարիմ են մնում Աստուծոյ հրամանին
իւրեանց ծառայութեանց մէջ: ծառայ զար

Տիեզերքի ստեղծող Հօր Աստուծոյ Որդին
Յիսուս Քրիստոս, որ մեր սիրոյն համար մեզ
նման մարդ եղած էր և կոռուկց Որդի մարդոյ
յարգեց իւր վճիռը քանզի շարունակ գիւղից
գիւղ քաղաքից քաղաք ոաքով շրջելով քարոզում
էր և մսիթարում, բժշկում էր կազիրը կոյրերը
գուացեալները և անգամալոյծները և ուրիշ շան
հիւանդներ, որպէս զի այնուշետեսնոքա աշխար
տէին և իւրեանց վաստակով ասպէին և հասարա
կութեան վերայ բեան չլինեին: Դատարկութիւնն
մայր և ամեն չարեաց: և ծառայ զար

Գօղոս ս. առաքեալն առ արհետիւ խորար
նակար էր (չատիր կարող) պարապ ժամերում և
օրերում կարում էր վրաններ և ծախում և ապշ
րում իւր ձեռքի աշխատանքով՝ տուանց ժողո
վրդեան ծանրութիւն տալու (Գործք. Ժ. 3 և
Ա. Կորն. Դ. 12): Սոյն առաքեալն ասում է,
«Որ ոչն գործիցէ, կերիցէ մի՛» (Բ. Թես. Գ. 10):

Ով որ չէ ուղում աշխատել հաց կլ չուտէ: Աս-
տուծոյ արքայութեան դռներն պինդ փակուած
են ծոյլերի և չկործողների առաջ: «Ուլից և
ծուլից փակեալ է արքայութիւնն Աստուծոյ» «և
բռունք յափշտակեն զնա» այսինքն աշխատողներն
և հետամուտ եղողներն յափշտակում են Աստուծոյ
արքայութիւնը (Մատ. ԺԱ. 12):

Միթէ չփիտէք որ հասարակութեան քրտնա-
թոր աշխատանաց արդիւնքովն են կառավարուում
աշխարհիս տէլութիւններն էլ վանքերն էլ, վա-
նականներն էլ ուսուցիչներն էլ, բժիշկներն էլ,
տնանկ և անկար աղքատներն էլ, որբանոցներն
էլ, հիւանդանոցներն էլ մինչեւ անգամ երկնքի
թռչուններն և զետնի մրչուններն էլ: Ահա այս-
պէս ծանր է ժողովրդեան շալակի բեռն, որ կը
թեթեանայ միայն անխոնջ աշխատելով և ժիր
գործելով և չսփառոր ապրելով:

Մինչեւ այս տեղ խօսեցինք մարմնաւոր աշ-
խատանաց և մարմնաւոր հացի և քրտանց մասին.
մի քանի խօսք էլ ասենք հոգեւոր աշխատանաց,
հոգեւոր հացի և քրտանց մասին: Հազարաւոր
տարիներ առաջ և Մարգարէններն և ա. Առա-
քեալներն ինչպէս հոգեւոր մշակներ՝ Աստուծոյ
հրամանաւ և ա. Հոգւոյ ներշնչմամբ գրեցին չին
և Սոլոկուակարանը և թողին մեզ համար Աս-
տուծածաշունչը: Մարգարէնների և Առաքեալների հո-
գեւոր աշխատաւթեանց և քրտանց պառզներն են

Ս. Գիրքն՝ Աստուծոյ խօսքերն՝ երկնքից մեզ շնորհուած ինչպէս անմանհական հաց և հոգեոր կերպկուր, որովհետեւ ոչ միայն հացիւ կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ, որ ելանէ ի ընթանոյ Աստուծոյ։ Քանի որ Աստուածաշունչն է Աստուծոյ բերանից գուրս եկած ամեն խօսքերն. քանի որ մարդ մինակ հացով չէ ապրում, ուրեմն, սիրելի եղբայրներ և քոյրեր, մեր ժամանակի մի մասը նուիրենք Ս. Գիրքը կարդալու։ Ս. Գիրքն հոգեոր կերակուր է տալիս մեր հոգիներին, հոգեոր անունդ է տալիս մեր մտքերին, աստուածային երկիւղիւն կրթում է մեր սրտերը, ազնուացնում մեր զգացմունքները, զագում մեր անսանձ կիրքերը, արիացնում մեր բանակութիւնը, սանձահարում մեր վատ նայուածքը և մեզ զարձնում Աստուծոյ ճշմարիտ որդիներ։ Ս. Գիրքն է մեզ սովորցնում Աստուծոյ անսահման սէրը դէպի մեզ, և մեր բոլոր պարտաւորութիւնները և երախտագիտութիւնը դէպի Աստուած։ Ս. Գիրքն է այն միակ անմոլարձանապարն, որ մեզ առաջնորդում է Յիսուս Քրիստոսի հետ դէպի երկինք չօր Աստուծոյ մօտ։ Ո՞վ է մեզ միիթարում մեր սփաւոր, տրտում և ախուր եղած ժամանակի թիւ Ո՞վ է մեզ յուսազբում մեր ձախորդութեանց, փորձութեանց և անյաջողութեանց մէջ ընկած ժամանակ։ Ո՞վ է զօրացնում մեզ մահօւան լոպէին, որ ուրախութեամբ հեռանանք այս աշխարհից և լինինք միայն Քրիս-

տոսի հետ։ — Միմիայն Ս. Գիրքն։ Այս, միայն Ս. Գիրքն է մեր հոգիների կեանքն և կենդանութիւնն, քանզի «Դուք նոքօք համարիք ունիլ կեանս յանձինս»։ Արդ՝ Մարգարէներն և Առաքեալներն հոգեոր աշխատութեամբ գրեցին Ս. Գիրքը գուք եւ աշխատեցէք կարգաչ և շատ կարգալ։ Մի ասէք թէ գժուար է Ս. Գիրքն, չենք կարողանում կարգալ և չենք կարողանում հասկանալ։ Հաստատ հաւատացէք որ Թղթախաղը սովորելուց գժուար չէ Ս. Գիրքը սովորել և հասկանալ։ Այնքան անգին ժամանակներն որ վատնում են մարդիկ թղթախաղի համար, եթէ նոյն ժամանակների քառորդը նուիրեին Աստուածաշունչը կարգալու, անգին արած կը լինէին։ Ուրեմն աւելի լաւ չէր լինէլ որ կարտի թղթերը թերթելու տեղ թերթէին աւետարանի թղթերը աւելի օգտակար չէր լինէլ որ կարտով խաղաղալու տեղ՝ խաղային Աստուածաշնչի թղթերը կարգալով։ Միթէ գուք չէք տեսել Ս. Գրքի շինած տունը և թղթախաղի քանդած աները։ միթէ գուք չէք տեսել և չափաւոր ապրող մարդոց թղթած մեծագումար հարստութիւնները, որ թղթախաղով ոչնչացրած են նոցա խաղամոլ և շռայլ որդիքն և մինչեւ անգամ վատնած հայրենի աները, խանութները և կալուածները և թղթախաղում զրաւ զրած նոյն իսկ իւրեանց հագուստները։ Դեռ չենք ասում կոպէկ կոպէկ

վաստակելը, և հազարներով, հարիւրներով վասնելը.
գեռ չենք ասում՝ որ այդպիսիներն իւրեանց ընտանիքը թողում են միայնակ և անխնամ աների մէջ, գիշերներն խաղում մինչև առաւօտ, խանգարում իւրեանց առողջութիւնները դատարկում քսակները, կարում քունը, տիսուր, տրառում դառնում առւն. լուսագէմին դռները զարկելով անհանգիստ անում խեղճ ընտանիքը և ծառան և ապա քնանում. մինչև կէսօր: Ահա ձեզ թղթախաղի օգուտներն:

Ազաշում եք, եղբայրներ, այսուհետեւ միր աշխատեցէք և ձեր ձականի քրտինքով ապրեցէք և ապրեցուցէք ձեր գերդաստանները: Հեռացէք շոայլութիւնից և կծծիութիւնից, ծուլութիւնից և դատարկութիւնից: սիրեցէք չափաւորութիւն, համեստութիւն և աշխատութիւն: Եւ դուք, սիրելի քոյրեր և տիկիններ, աշխատեցէք սիրել տնարարութիւն և մաքրութիւն, հսկեցէք ձեր խոհանոցի մաքրութեան և կերակրութերի զերայ և սեղանների ու ամանների մաքրութեան զերայ, որ առողջապահութեան զլսաւոր գեղերից մինչ. ձեր մանուկները կուք կերակրեցէք ձեր օրհնեալ մոյրական կաթով: Վերջապէս, ազաշում եմ եղբարք, հեռացէք թղթախաղութիւնից և ձեր զաւակաց չար օրինակ տալուց, ձեզ համար զգուշութեան խրատ առէք թղթախաղութեամբ սնանկացողներից: աշխատեցէք ունակութիւն անել ձեզ և

շատ կարդալ Ս. Գիրքը և նորա մէջ գտնել ձեր հոգեկան զբաղմունքը և միտթարութիւնը և բաւականութիւնը: Իզուր մի կորցնէք ձեր թանկագին ժամանակը: Աստուծոյ խօսքը մի՛ փոխէք թղթախաղի հետ. Ս. Գիրքը շատ կարդալով կը զգաք նորա քաղցրութիւնը. Աստուծած օգնէ ձեզ ամեն պարագայում. Ամեն:



8 Ա. Ն Կ

Brku

ՄԵԾ. մեկենաս Մանուկ-աղա

Ա. Բարեկամության	Ա.-Բ.
Ա. Քարոզ	1-11
Բ. »	12-16
Գ. »	17-24
Դ. »	25-33
Ե. »	34-42
Զ. »	43-51

829

0024588



ՀՀ Ազգային գրադարան

NL0027578

829

